

ՀՏԴ 93/94

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

**ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
Գալստյան Գ. Ա.**

Հոդվածը վերաբերում է Հայաստանում պատկերամարտական շարժման դրսևորումներին: Պատկերամարտությունը՝ որպես Բյուզանդական ժողովրդական քրիստոնեության ծնունդ, իր արտացոլումը գտավ Հայաստանում, որի վերաբերյալ, սակայն, Հայ առաքելական եկեղեցին որդեգրեց զուսպ մոտեցում: Այն տարածվեց մասնավորապես աղանդավորների մոտ, որոնցից էին մծղնեականները, պավլիկյանները, թոնդրակյանները: Հայ եկեղեցու դավանանքը կազմեց պատկերահարգությունը, ըստ որի՝ ոչ թե պատկերի մասը բուն նյութին էին երկրպագում, այլ խորհրդին: Իսկ հայերի մեջ առավել տարածում գտավ խաչապաշտությունը, որն իր ողջ էությամբ դրսևորվում է նաև այսօր:

Քանի որ 8-9-րդ դարերում խաչի պաշտամունքը դարձել էր համազգային և ունեցել էր զարգացման նախընթաց շրջան, և պատկերների պաշտամունքի հարցը հայտնվել էր համազգայնացման շրջանում, պարզ է դառնում, որ ժողովրդի մոտ տարածում կգտնեք այն երևույթը, որն առավել տարածված էր: Ե՛վ խաչապաշտությունը, և՛ պատկերապաշտությունը հասարակության նույն պահանջն էին բավարարում, ունեին նույն նպատակը: Հայ եկեղեցու պաշտամունքի մասը կազմեց խաչապաշտությունը, որը հետագայում էլ մնաց անսասան:

Բանալի բառեր. պատկերամարտություն, Հայ առաքելական եկեղեցի, խաչապաշտություն, պատկերահարգություն, դավանանք, խորհուրդ, հայկական, էություն, նյութ:

Հայոց եկեղեցու պատմության մեջ առանձնահատուկ կարևորություն ունի Հայաստանում պատկերամարտական շարժման

մանրակրկիտ ուսումնասիրությունը՝ երևույթի բազմաշերտ և համակողմանի քննությամբ: Ժամանակի ընթացքում քրիստոնեական եկեղեցու պատմության մեջ ծագել են բազմաթիվ շարժումներ, որոնց ծագումը պատահական բնույթ չի կրել: Հայ առաքելական եկեղեցին՝ որպես տիեզերական եկեղեցու մի մասնիկ, անմասն չի մնացել այդպիսի շարժումներից: Այդպիսի երևույթները աշխուժացնում էին իրենց գործունեությունը, երբ սրվում էին հասարակական հարաբերությունները, հասարակ ժողովրդի նկատմամբ ճնշումները և հարստահարումները: Առաջին երեք դարերում քրիստոնյաներն իրենց գաղափարներն արտահայտելու համար բավարարվում էին զանազան խորհրդանկարներով՝ ձուկ, նավ, քնար, աղավնի, խարիսխ և հատկապես խաչ: Վերջինս, ի հակակշիռ խաչը մերժող ժամանակակից աղանդավորական կեղծքրիստոնեական մի շարք ուսմունքների, ունի աստվածաշնչական հենք (*Հմմտ՝ Մատթ. ԺԶ. 24, Մարկ. Ը. 34, Ղուկ. Ը. 23*): Պատկերների մասին Սուրբ Գրքում նույնպես հանդիպում ենք բազում վկայությունների, որոնք իրենց մեջ պարունակում են պատկերահարգության գաղափարական ակունքներ (*Հմմտ՝ Ելից ԻԶ. 31, Գ. Թագ. Զ. 23-24, Եզեկ. ԽԱ. 18-20*):

Դեռևս պատկերամարտներից առաջ քրիստոնյաներին պախարակում էին հրեաները՝ մեղադրելով նյութապաշտության մեջ: Հրեաները կարծում էին, որ քրիստոնյաները պատկերի բուն փայտն են երկրպագում իբրև Աստծու: Նրանք ծաղրում էին քրիստոնյաներին այն պատճառով, որ վերջիններս հարգում են սրբերի մասունքները: Սրա մեջ նրանք տեսնում էին սոսկ ոսկրերի հանդեպ հարգանք: Կռապաշտ էին կոչվում բոլոր նրանք, ովքեր համբուրում էին Քրիստոսի և Տիրամոր կամ որևէ այլ սրբի պատկեր [8]: Ժամանակի ընթացքում պատկերներին վերագրվում է գորություն, իսկ այն նյութը, որով պատրաստվում և ձևվում էր պատկերը, համարվելով սրբազան, դառնում էր պաշտամունքի առարկա:

Այնուամենայնիվ, քրիստոնյա աշխարհի ողջ տարածքում նկարներին վերագրվող հարգանքի աստիճանը միակերպ չէր: Պատկերամարտները դեմ էին ավետարանական բնույթ ունեցող նկարներին: Ըստ նրանց՝ կռապաշտություն և սրբապղծություն էր Քրիստոսին, նրա աշակերտներին և առհասարակ սրբերին նկարելը: Պատկերամարտական հակումներ ունեցող շարժում ձևավորվել էր դեռևս 1-ին դարերից:

Բյուզանդիայի կայսր Լևոն Բսավրացու (717-741) անձնական ցանկությամբ և հայացքներով առաջ եկած այս շարժումը՝ որպես հեթանոսական աշխարհայացքի վերակենդանացում, իր արտացոլումն է գտել նաև Հայաստան աշխարհում: Հայ եկեղեցին պատկերների վերաբերյալ որդեգրել է չափավոր մոտեցում: Այդ զուսպ մոտեցումը բնորոշ էր հայ եկեղեցու բոլոր հայրերին: Հայաստանում պատկերամարտական շարժումը տարածվում է գերազանցապես աղանդավորների մոտ: Այդպիսի աղանդներից էին մծղնեականները, պավլիկյանները և թոնդրակյանները:

Պատկերամարտությունը և պատկերահարգությունը Հայաստանում ծնունդ են առնում հայ-բյուզանդական եկեղեցիների փոխառնչության համատեքստում: Նման երևույթների ներմուծումը տեղի է ունենում բացառապես գիտական ճանապարհով [7]: Այնուհանդերձ, հարկ է նշել, որ հայ եկեղեցին չգնաց ոչ մի ծայրահեղության՝ պահելով չափի զգացողությունը: Պատկերների հանդեպ որդեգրած մոտեցմամբ ավելի մոտ էր պատկերահարգությանը [3]: Պատկերապաշտությունը ընկրկեց նախ և առաջ խաչի պաշտամունքի ազդեցությամբ: Սրբապատկերների հարցում Հայոց եկեղեցու զուսպ դիրքորոշման պատճառը ժողովրդական ըմբռնման հետևանք էր, ըստ որի՝ և՛ պատկերամարտությունը, և՛ պատկերապաշտությունը խորթ երևույթ են և միայն քաղկեդոնականներին են բնորոշ: Սա էր պատճառը, որ Հայոց եկեղեցին բավարարվում է պատկերամարտության խափանմամբ, ինչպես նաև անխոս շրջանցում է պատկերների քարոզչությունը և նրանց պաշտամունքի խրախուսումը:

Հայաստանում պատկերամարտական շարժման դրսևորումների մասին մեզ տեղեկություններ են հաղորդում մի քանի աղբյուրներ: Նրանցից է Վրթանես Քերթոզի «Յաղագս պատկերամարտից» նշանավոր աշխատությունը: Վրթանես Քերթոզը հայ եկեղեցական պատմության ականավոր դեմքերից է: Մաղաքիա Օրմանյանը, հիմք ընդունելով «քերթոզ» անվանումը, Սյունյաց նշանավոր վարդապետական դպրոցի աշակերտ է նրան համարում [13]: Երվանդ Մելքոնյանն իր «Վրթանես Քերթոզը և պատկերամարտությունը» աշխատության մեջ նշում է, որ «քերթոզ» մակդիրը նրան որակել են ուսումնական կարողությունների համար: Մովսես Բ Եղիվարդեցի կաթողիկոսի (574-604) գահակալության ժամանակաշրջանում Վրթանեսը եղել է նրա օգնականը, իսկ երբ մահացել է վեհափառը, նա կաթողիկոսական տեղապահ է նշանակվում

և 604-607 թթ., երբ հայրապետական գահը թափուր էր, եկեղեցական գործերն էր վարում: Եվ հետագայում էլ, երբ կաթողիկոսական աթոռին է հաստատվում Աբրահամ Ա Աղբաթանեցի կաթողիկոսը (607-613), Վրթանեսը շարունակում է կարևոր գործունեություն ծավալել հայ եկեղեցում: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ հայ և վրաց եկեղեցիների միջև վեճ էր առաջացել, ինչն էլ պատճառ հանդիսացավ երկու եկեղեցիների պառակտման: Ըստ հիշյալ թղթի՝ պակերները նախատեսված էին «Աստվածության փառքի պատվի և երկրպագության» համար [5]: Ինչպես գիտենք, պատկերամարտները թշնամաբար էին վերաբերվում ոչ միայն պատկերներին ու սրբերի մասունքներին, այլև խաչին, մինչդեռ Վրթանես Քերթողի մոտ հիշատակված պատկերամարտները հարգում էին խաչը և երկրպագում: Հատկանշական են նաև եկեղեցիներում պատկերվող նկարների թեմաները: Հայերին բնորոշ էր սրբերի հիշատակությունը: Հաճախ պատկերվում էին Քրիստոսը, Խաչը, նաև Աստվածածինը՝ առանձին կամ մանուկը գրկին: Հայ ժողովուրդը տարբեր վայրերում՝ որմնանանկարավոր եկեղեցիներ է ունեցել: Որպես նման եկեղեցիներ՝ հիշատակվում են Հոգյաց վանքի Տիրամոր պատկերը, Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին [7], Սրենը, Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչը [5]: Պատկերների արտացոլումը նկատելի է նաև գերեզմանաքարերի վրա: Կարևորվում էին նաև գունային չափորոշիչները՝ կարմիր, կանաչ, սև և կապույտ, որոնք երկրի չորս տարրերն էին խորհրդանշում՝ լույս, հող, ջուր և օդ: Ըստ Գրիգոր Տաթևացու՝ ոսկին նույնպես կարևորվում է՝ որպես գույնի վարդապետություն: Այն համարում է «անապական հինգերորդ էությունն երկնից», որը վեր է բոլոր նյութերից [6]: Առհասարակ մեր միջնադարյան եկեղեցիները, հատկապես 7-րդ դարում կառուցվածները, գլխավորապես որմնանկարվել են, որոնք խաթարվել են Հայաստանում արաբական տիրապետության հաստատմամբ: Պատկերամարտությունը՝ որպես դավանական, կրոնական վեճ, սերտորեն կապ ունի նաև արվեստի զարգացման պատմության հետ, քանի որ իր բնույթով դեմ էր նկարներին:

Պատկերները, նկարները երբեք աննպատակ չեն եղել: Պատկերների միջոցով փորձել են հավատացյալին ըմբռնելի դարձնել աստվածայինը, անհասկանալին և անտեսանելին:

Պատկերապաշտության ի հայտ գալու մեջ կարևոր է նաև մի հանգամանք՝ հեթանոսական կրոնի ազդեցությունը: Հարկ է նշել, որ

պատկերապաշտության նախնական, ոչ խեղաթյուրված նշանակության պահպանման դեպքում այսպիսի երևույթներ տեղի չէին ունենա:

Պատկերամարտության մասին տեղեկություններ կան պահպանված նաև Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղուանից աշխարհի» աշխատության մեջ տեղ գտած Մեծ Կողմանց Դավիթ եպիսկոպոսին ուղղված Հովհան Մայրազումեցու թղթում [1]: Ըստ Կ. Մելիքյանի՝ «Մայրազումեցի» անունը ածական էր, որն առաջացել էր Մայրոց Գումից: Այն Եզր Ա Փառածնակերտցի կաթողիկոսի (630-641) կողմից Մայրոց Վանք տեղանունի արհամարհաբար գործածված տարբերակն էր [4]: Հ. Քենդերյանը «Մայրազում» տեղանվան մասին մեկ այլ լուսաբանում է տալիս, և նշում է նաև պարզաբանող հեղինակի՝ բյուզանդագետ Հ. Բարթիկյանի անունը: Նա նշում է, որ Մայրազումը հունական «Մետրոկոմե» բառին է նման, որն էլ թարգմանաբար «Մայրավան» է նշանակում, և չի հիշեցնում գոմի այսօրվա իմաստը [11]: 7-րդ դարի նշանավոր գիտնական, աստվածաբան, երգվյալ հակաքաղկեդոնական Հովհան Մայրավանեցու վերաբերյալ ստահող ու մտացածին պատմություններ են հորինել հայ երկաբնակները, ըստ որոնց՝ Հովհան Մայրազումեցին հետագայում ընդդիմանում է հայոց կաթողիկոսին, որի պատճառը առաջին հերթին իր հերետիկոսական հայացքներն էին, այնուհետև՝ օգնության միջոցով հայոց կաթողիկոս դառնալու հույսը: Նա աքսորվում է Կովկաս լեռը՝ կայացրած ժողովի որոշման համաձայն, որի ճակատին «աղվեսադրոշմ» են խարանում: Հետագայում, սակայն, նա վերադառնում է հայրենիք և խոր ծերության մեջ վախճանվում Գարդման գավառում: Մինչդեռ իրականում Կարինի 633թ. հայ-բյուզանդական համատեղ ժողովից հետո Հովհան Մայրավանեցին քննադատում է Եզր Ա. Փառածնակերտցի կաթողիկոսին՝ ասելով, որ նա եզր տարավ հայոց առաքելական դավանանքը: Հալածվելով վեհափառի կողմից՝ միառժամանակ քաշվում է Կոտայքի Մայրավանք, որի պատճառով Եզրը նրան արհամարհաբար կոչում է Մայրազումեցի: Քանի որ Մայրավանքը մոտ էր, և Հովհանը շարունակ հալածվում էր Եզրի կողմից, ուստի նա հեռացավ հայրենի Գարդման գավառ: Նրա՝ հայրենիք վերադառնալու մասին տարբեր կարծիքներ կան: Հովհան Մայրազումեցի վարդապետին, սակայն (պետք է նկատի ունենանք Հովհան Օձնեցուն) դիմել էր Դավիթ եպիսկոպոսը: Այս հանգամանքի մասին է խոսում նաև այն փաստը, որ Հովհան Օձնեցին քաջատեղյակ էր աղանդներին և ունի հակաաղանդավորական գրվածքներ՝ «Ընդդեմ պաւղիկեանց» և «Ընդդեմ երեւութականաց»:

Հովհան վարդապետի՝ պատկերամարտության մասին տեղեկություններ պարունակող նամակը բաղկացած է երկու մասից. մի մասը ներկայացնում է ժամանակակից իրադարձությունները, որոնք մտահոգել էին Մեծկվենից Դավիթ եպիսկոպոսին, իսկ մյուս մասում ներկայացվում է Հայաստանում Հեսու, Թադեոս և Գրիգոր անուններով մարդկանց քարոզչության մասին: Թղթում նշվում է. *«Ոմանք պատկերս ոչ ընդունին, ոմանք մկրտութիւն ոչ առնեն, ո՛չ աղ օրհնեն, ո՛չ պսակ դնեն հարսնեայ. յայս, եթե քահանայութիւն բարձեալ է յերկրես»* [1]: Այսպիսի մարդկանց գործունեության մասին Դավիթ եպիսկոպոսը հայտնում է Հովհան վարդապետին և խնդրում է հասկանալի դարձնել երևույթը:

Հայտնի է, որ Հեսու, Թադեոս և Գրիգոր քահանաները բաժանվում են եկեղեցուց [5] և հեռանալով մայրաքաղաք Դվինից [10]՝ քարոզչության նպատակով հասնում Սյունիքի Սոթք գավառը: Հայոց կաթողիկոս Մովսես Եղիվարդեցին նրանց պարտադրում է վերադառնալ մայրաքաղաք՝ իր մոտ, բայց նրանք մերժում են կաթողիկոսի պահանջը: Այնուհետև կրկին քարոզչական նպատակներով տեղափոխվում են Արցախ և աղվանների հարևան երկրում խոռվություն են բարձրացնում: Այնուհետև Աբրահամ Ա Աղբաթանեցի կաթողիկոսի խնդրանքով Գարդմանա տերը նրանց ձերբակալում է և ուղակում Դվին, որտեղ այդ աղանդավորներին *«համոզելով դարձի են բերում»* [5]: Գարդմանի տիրոջ կողմից ձերբակալվելը խոսում է այն մասին, որ Արցախում քարոզչություն իրականացնելուց հետո շարժվել են դեպի ավելի հյուսիս՝ Ուտիք:

Մեզ հուզող խնդրի մասին պատասխաններ կան պահպանված «Կանոնագիրք հայոց» ժողովածուում: *«Կանոնք տեառն Յովհաննիսի Հայոց կաթողիկոսի»* կանոնախմբի Ժ. սահմանման մեջ խոսվում է մկրտության մասին. *«Պարտ և արժան է զմկրտութեանն ձեթ քահանային արհնել մի ըստ միոջէ ընդ մկրտելն, ըստ բաւականի ժամուն պիտոյից եւ նոյնժամայն առմկրտեալսն մերձեցուցանելով՝ զարհնեալն սպառել, եւ մի՛ իշխել զմիանգամ արհնեալն բազում անգամ արհնել. եվ միայն աւծանել նովաւ զերեխայսն եւ զմկրտեալսն ընդ մկրտելն յաւազանին, եւ յայլ խորհուրդ աւծման մի՛ իշխեսցեն մատուցանել զնա»* [2]: Սրանից կարող ենք եզրակացնել, որ Արցախի աղանդավորները մերժում էին մկրտությունը: «Կանոնագիրք հայոց»-ի նույն կանոնախմբի ԻԷ. կանոնում հստակ նկատվում է, որ խաչի գործության և ժողովրդի կողմից գործածման հիմնական և առաջնային պայմանը եղել և մնում է առ այսօր

խաչը մյուսնով օծելն ու օրհնելը: Սահմանման մեջ մասնավորապես կարդում ենք. «*Եթե ոք խաչ արասցե փայտեաց եւ կամ յինչ եւ իցէ նիւթոյ, եւ ոչ տացե քահանային ււրհնել եւ ււծանել զնա միւռոնաւն արքով, ոչ է պարտ զնա ի պատիւ ընդունել կամ երկրպագութիւն մատուցանել, զի դատարկ եւ ունայն է յաստուածային զւարութենէն եւ արտաքոյ ււանդութեան առաքելական եկեղեցոյ*» [2]: Եվ այս կարգը կատարելուց հետո արժան է երկրպագություն մատուցել:

Թաղեոսը՝ որպես Հայաստանում պատկերամարտության քարոզիչ, հիշատակվում է ն՝ Հովհան վարդապետի թղթում, ն՝ Վրթանես Քերթոզի մոտ: Եսային էլ կարող է նույնացվել Հեսուի հետ: Այս երկու անունները հայկական տեքստերում հաճախ շփոթությունների տեղիք էին տալիս: Այնուհանդերձ պարզ հասկանալի է, որ երկու հեղինակների խոսքը նույն շարժման մասին է:

Հայաստանում պատկերամարտական շարժման գաղափարական կրողների՝ պավլիկյանների դեմ գործունեություն ծավալած Հովհան Օձնեցին իր «*Ընդդէմ պաւղիկեանց*» ճառում նույնպես խոսում է մի շարժման մասին, որը Հայաստանում լայն տարածում էր գտել, և որի գաղափարական ակունքներում կային պատկերամարտական հակումներ և ուղղակիորեն պատվաստված էին պատկերամարտության հողի վրա [12]: Այս աղանդի տարածման համար կարևոր հիմք է հանդիսացել ոչ միայն պատկերամարտական շարժումը, այլ նաև իսլամի վտանգը [9]: Եվ բնական է, որ հայ եկեղեցին, իր ազգային-դավանաբանական խնդիրներից ելնելով, պետք է դուրս գար պավլիկյանների դեմ, որոնք, ըստ Հովհան Օձնեցու, նույն մծղնեականներն էին: Նրանք չէին կարողանում տարբերակել քրիստոնեական աստվածպաշտությունը և հեթանոսական բազմաստվածությունը: Խաչի պաշտամունքին և նրա կարևորությանը անդրադառնում է նաև Օձնեցին: Օձնեցին նշում է, որ նրանք, չընդունելով պատկերը, դեմ են կանգնում նաև խաչին [10]: Խաչի պաշտամունքը համազգայնացվել էր 7-8-րդ դարերում, որը ուներ նախընթաց զարգացման շրջան [7]: Այս ժամանակաշրջանում խաչապաշտության և պատկերապաշտության միջև սկսվում է պայքար: Խաչի պաշտամունքը, որն իր նախնական ձևավորումը գտել էր 6-րդ դարում, հասնելով 8-րդ դար, առավել մասսայականացվում է: Եվ քանի որ պատկերների պաշտամունքի հարցը այս նույն ժամանակաշրջանում էր հայտնվել, բնական է, որ պայքարում դրական արդյունքի կհասներ ժողովրդի մոտ առավել տարածում գտած երևույթը: Ե՛վ

խաչապաշտությունը, և՛ պատկերապաշտությունը հասարակության միևնույն տիպի պահանջն էին բավարարում, ունեին նույն նպատակը: Երևութականությունը՝ որպես պատկերամարտության կրող, գնոստիկյան երևույթ էր, և նրա ջերմեռանդ հետևողները պատրաստ էին մոլորեցնել տգետներին [9]:

Հարկ է նաև նշել, որ «Կանոնագիրք հայոց»-ում ներկայացվող խաչի երկրպագության և օրհնության մասին տեղեկություններն անչափ կարևոր և բազմազան են:

Պատկերապաշտության տարածման և զարգացման գործում կարևոր մի հանգամանք գոյություն ուներ: Պատկերը, որը նախատեսված էր Քրիստոսի կյանքի պատմությունը ներկայացնելու, ժողովրդական շատ զանգվածների էր հասանելի: Այսինքն՝ պատկերի խորհուրդն ըմբռնելու համար անհրաժեշտություն չկար մեծ ճիգ գործադրելու: Մա հնարավորություն էր տալիս հասարակության բոլոր անդամներին, անկախ նրանց կրթվածության մակարդակից, հասկանալ պատկերի միջոցով բացատրվող թեմատիկան: Պատկերի արդյունավետությունը պայմանավորված է ոչ թե նրա իրապաշտությամբ, այլ խորհրդով: Կրթվածության ցածր մակարդակ ունեցող հասարակության անդամներն էլ գերադասեցին իրապաշտությունը: Ընդունելով այն, որ պատկերագրական որոշ մասեր մեզ է հասել հեթանոսությունից, այնուամենայնիվ, մանրանկարչությունն արդեն կիրառվում և դրսևորվում է քրիստոնեության մեջ: Քրիստոնեական միջավայրում նկարչական արվեստի կիրառվելը բացի հավատացյալներին բովանդակությունը մատչելի դարձնելուց, ուներ նաև մեկ այլ նպատակ՝ Ս. Գիրքը վայելուչ կերպով զարդարել: Հայ եկեղեցում խորանները նույնպես ներկայացվում էին պատկերների տեսքով: Այս մտածումը իրենից բխեցնում էր երկու նախադրյալ: Առաջինը՝ զգայական, իբրև դրական զգացողությունը, իսկ երկրորդը՝ խորաններում պատկերված նկարների ծածուկ իմաստն է, որն էլ իրենից բխեցնում է պատկերների խորհրդավոր էությունը: Հայ եկեղեցին պատկերների նկատմամբ որդեգրած իր առանձնահատուկ մոտեցմամբ կրկին ցույց տվեց իր յուրահատկությունը, որը ոչ պատկերապաշտությունն էր, ոչ էլ պատկերամարտությունը, այլ պատկերահարգությունը: Պատկերահարգությունը հայ եկեղեցու դավանանքի կարևոր մասը կազմեց և հետագայում էլ մնաց անսասան:

ПРОЯВЛЕНИЕ ДВИЖЕНИЯ ИКОНОБОРЧЕСТВА В АРМЕНИИ

Галстян Г. А.

Статья посвящена проявлению иконоборческих движений в Армении. Иконоборчество, зародившись в византийском народном христианстве, нашло свое отражение в Армении, к которому, однако, Армянская Апостольская церковь проявила сдержанный подход. Оно распространилось особенно у сектантов, среди которых выделим павликианов и тондракитов. Поклонение образам явилось частью веры Армянской церкви, однако оно означало благоговение не перед самим изображением, а поклонение самой сущности Таинства. У армян идолопоклонство стало поклонением кресту, которое по всей своей сути проявляется и сегодня. В качестве того, что обожествление креста получило общенациональный вид в 8-9 в.в. и при этом имело предыдущий период развития, вопрос благоговения перед иконами появился в общенациональном кругу, становится ясно что среди народа распространяется то явление, которое было более распространенным. И крестопоклонение, и иконопоклонение удовлетворяли ту же потребность общества и имели ту же цель. Крестопоклонение стало частью культа Армянской церкви, которая и в дальнейшем осталась нерушимой.

Ключевые слова: иконоборчество, Армянская Апостольская церковь, поклонение кресту, поклонение образам, вероисповедание, Таинство, армянский, сущность, материал, подход.

MANIFESTATION OF MOVEMENT ICONOCLASM IN ARMENIA

Galstyan G. A.

The article presents the manifestations of the iconoclastic movement in Armenia. The iconoclasm, as the birth of Byzantine Christianity, is reflected in Armenia, where the Armenian Apostolic Church takes a cautious approach. Particularly common among sectarians, including mountains, Pavlikianism, Tondrayi. Worship was part of the faith of the Armenian Church, but it meant a blessing not before the image itself but the deviation of the essence of the Sacrament. Cross worship was widely spread among Armenians which is still present in essence. Since the cult of the cross was nationalized in the 8th and 9th centuries and had a period of prehistoric development, and the problem of image worship arose in the era of nationalization, it becomes clear that people

will find the phenomenon that was most common. Both the cult of cross and icons had the same goal. It was part of the church service, which crossed the line, which subsequently remained unshakable.

Keywords: Iconoclasm, Armenian Apostolic Church, Cult of cross, worship, Sacrament, Armenian, Essence, material.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մովսէս Կաղանկատուացի: Պատմութիւն Աղուանից աշխարհի: Երևան: «Հայաստան» հրատ.: 1969: 321 էջ:
2. «Կանոնագիրք հայոց» աշխ. Վ. Հակոբյանի: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Հ. Ա.: 1964: 742 էջ:
3. Մելիքյան Կ.: Պատկերամարտական շարժման էությունն ու պատկերամարտության հայկական դրսևորումները: Երևան: Հայոց պատմության հարցեր: Հ. ԺԲ: Գիտ. հոդվ. ժողովածու: ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ: ՀՀ ԳԱԱ պատմ. ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների 32-րդ նստաշրջանի գիտական զեկուցումները: 3-4 հուլիսի, 2011թ.: էջ 22-46:
4. Մելիքյան Կ. "Narratio de rebus Armeniae" հայ քաղկեդոնական երկը (շուրջ 700 թ.) վաղ միջնադարյան հայոց եկեղեցու պատմության սկզնադրյուր: Երևան: ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ.: 2007: 165 էջ:
5. Մելքոնյան Ե. Վրթանես Քերթողը և պատկերամարտությունը:// Էջմիածին ամսագիր: 1970: Զ/Է: էջ 86-97:
6. Ներսեսյան Ն. Աստվածաշունչը և հայ մշակույթը: Երևան: Հայաստանի աստվածաշնչային ընկերություն: 2001: 96 էջ:
7. Սահակյան Ա. Միջնադարյան պատկերապաշտության հայկական տարբերակը:// Պատմաբանասիրական հանդես: 1987: Հ. Բ.: էջ 150-159:
8. Մեդրակեան Ա. Հայաստանեայց եկեղեցու պատկերայարգութիւնը: Ս. Պետերբուրգ, տպ՝ Պուշկինեան: 1904: 470 էջ:
9. Տեր-Մինասյան Ե. Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1968: 239 էջ:
10. Տեր-Ներսեսյան Ս. Հայ արվեստը միջնադարում: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1975: 131 էջ:
11. Քենդերյան Հ. Հովհան Մայրագոմեցի: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1973: 133 էջ:

12. Քյոսեյան Հ. Դրվագներ հայ միջնադարյան արվեստի պատմության:
Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան: 995: 299 էջ:
13. Օրմանյան Մ. Ազգապատում: Հ. Ա.: Ս. Էջմիածին: Մայր Աթոռ
Սուրբ Էջմիածնի տպարան: 2001: 1870 էջ:

Տեղեկություններ հեղինակի մասին

Պալստյան Գ. Ա. – ուսուցիչ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էօրնեկեան» հանրակրթական դպրոց

Էլ. փոստ՝ ggalstyan123@gmail.com

Տրվել է խմբագրություն 03.10.2019